ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի

և

«ԲԱՐԵՊԱՇՏ ՍԵՐՈՒՆԴ»

հիմնադրամի միջև

ք. Երևան «06» մայիսի 2011թ.

Նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի՝ անկախ գերատեսչական պատկանելությունից և սեփականության ձևից, ժամանակակից հետազոտական հմտություններով զինված կադրային ներուժով համալրման գործընթացին, ինչպես նաև աջակցել հանրապետության երիտասարդ գիտնականների ստեղծագործական աճին՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն և «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամը սույն հուշագրի ստորագրմամբ նպատակ են հետապնդում մեկտեղել իրենց հնարավորությունները և մրցութային հիմունքներով դրամաշնորհներ տրամադրել բնական, ճշգրիտ, տեխնիկական, հասարակական, հումանիտար գիտությունների և հայագիտության բնագավառներում Հայաստանի Հանրապետության շահույթ չհետապնդող կազմակերպություններում աշխատող երիտասարդ գիտաշխատողներին և ապիրանտներին:

Սույն հուշագիրը ստորագրող կողմերը հայտարարում են իրենց մտադրությունները.

- հնարավորությունների սահմաններում և գիտական անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա աջակցություն ցուցաբերել

բնական, ճշգրիտ, տեխնիկական, հասարակական, հումանիտար գիտությունների և հայագիտության բնագավառներում Հայաստանի Հանրապետության շահույթ չհետապնդող կազմակերպություններում աշխատող երիտասարդ գիտաշխատողներին և ապիրանտներին,

- երիտասարդ գիտաշխատողների և ապիրանտների դրամաշնորհների տրամադրումն իրականացնել համարժեք համաֆինանսավորման եղանակով,
- վերոհիշյալ նպատակների համար երկուստեք քայլեր ձեռնարկել լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ որոնելու նպատակով, այդ թվում՝ արտասահմանյան կազմակերպություններից:

Սույն հուշագիրը մտադրությունների ամրագրում է և չի հանդիսանում պաշտոնական պայմանագիր և, հետևաբար, ինչպես ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի, այնպես էլ «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի համար չի հանդիսանում միջոցների հատկացման պաշտոնական պայմանավորվածություն: Միջոցների տրամադրման համար կկնքվի պաշտոնական պայմանագիր:

ՀՀ ԿԳՆգիտության պետական կոմիտեի կողմից	«Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի կողմից
ՀՀ ԿԳՆգիտության պետական կոմիտեի նախագահ՝	«Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ՝
Ս. Հարությունյան	Բ. Բեգլարյան